



ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ, ԿՈՄԻՏԱՍ 150

ԻՄ ՆՈ՛Ր ՀԱՅՐԵՆԻՔ, ՀԶՈ՛Ր ՀԱՅՐԵՆԻՔ



– Էստի համեցե՛ք, էստի համեցե՛ք... Փոքրիկ Գիքորի այս կանչից հետո դահլիճը լցվեց ծաղիկներով, հյուրերով, մանկավարժներով, պապիկ ու տատիկներով...

Թումանյանական շունչն ու ոգին էր տիրում: Դահլիճը հայկական գույներ էր հագել էլ կարպետներ ու սփռոցներ, էլ խաչքարեր ու սափորներ, զոգնոցներ ու տարագներ, եռագույնն ու Մասիս սարն էլ անպակաս...

Գրասեղանի մոտ նստած է Թումանյանը (Վահեն) և «խորհում է էն մեծ խոսքը, որ տի ասի աշխարհին...»

«Անուշ» օպերայի նախերգի ֆոնին բարձր ու զիլ հնչում է թումանյանական ամենամեծ ճրջմարտությունը.

Հե՛յ, պարոննե՛ք, ականջ արեք Թափառական աշուղին...



Գործն է անմահ, լա՛վ իմացեք, Որ խոսվում է դարեդար, Երնե կ'նրան, որ իր գործով Կասրի անվերջ, անդադար...

Ապա՝ հաղորդավարներ Դավիթն ու Սյուզին ղեկավարում են ներկաներին ասելով

– Այսօր Դոնի Ռոստովի երկու դպրոցների (թիվ 61 և 83) հայտնի լեզվի «Արևիկ» խմբակների սաները կ'ներկայացնեն հայ ժողովրդի երկու սիրելի զավակներին հանճարեղ Հովհաննես Թումանյանին և Կոմիտասին նվիրված գրական-երաժշտական ցերեկույթը:

Համառոտ կենսագրականից հետո խումբը երգում է «Այս ինչ լավ է», «Ամպի տակից», «Կաքավիկ», «Չինար յար»:

Ահա բեմում են Անուշն ու Մարոն՝ սիրո երկխոսությամբ, ապա արտասանվում են հատվածներ «Անուշ» պոեմից: Հանկարծ լսվում է «կոխի եղանակ» և նահապետական գյուղում հայկական տարագով «մայրը» դիմավորում է նորապասկներին

ընդունված կարգով ու ծեսով: Վիճակ է բաժանվում ներկաներին և հարցվիկտորինա՝ «երկու տող Թումանյանից»: Թնդում են «Յարխուշտա», «Մարդարպատ» պարերը: Ժամանակ առ ժամանակ, կարծես իրական տեսիլքում, հայտնվում է Թումանյանը (Վահեն) և իր քառյակներով իմաստավորում հայի ու մարդկության ճակատագիրը:

Գալիս են «Վերնատան» հյուրերը. Զարենցը, Կոմիտասը, Աղայանը... «Ես իմ անուշը» երեխաների հետ կրկնում են ծնողները և բոլոր ներկաները: Հերթը հասնում է հեքիաթի հերոսներին. «Մուտասանը», «Կիկոսի մահը», «Պոչատ աղվեսը», «Անհաղթ արջորը», «Թագավորն ու չարչին», «Սասունցի Դավիթը» իրենց գեղեցիկ հագուստներով ու կատարումներով հիացնում են բոլորին: Ապա



Ամենայն հայոց թամադա Թումանյանի հրավերով բոլորը պարում են հայկական քոչարի:

Երեխաներին ջերմ խոսքերով ողջունում են բանաստեղծուհի Մուսանան Հովհաննիսյանը, օպերային երգչուհի Լուսինե Աղաջանյանը, վաստակավոր ուսուցչուհի Շողիկ Սիմավոսյանը, Լուսինե Պետանյանը, ռեժիսոր Մամիկ Զաքարյանը, հայ համայնքի ներկայացուցիչ Քրիստինե Փլուզյանը: Եվ վերջում մատուցվում է օրվա անակնկալը՝ տոնական տորթը եռագույնով, Լոր Լախիջևան քաղաքի գերբով և հորեյարների ստորագրություններով:

Այսպես ավարտվեց «Թումանյան, Կոմիտաս – 150» թեմայով բաց դասը մեր մանուկների մասնակցությամբ:

Ուսուցչուհիներ՝ Սոնա ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Արմինե ՀՈՎՍԵՓՅԱՆ
Լուսանկարները՝
Եկատերինա ՄԻՐՄԱՅՐԱՆՈՎԱՅԻ

@katia_mir